ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2017 թվականի N 83-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ Գայանե Կարլենի Արտուշյանին, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3/1 հասցեում:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Գայանե Կարլենի Արտուշյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2017 թվականի N 84-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժի համայնքապետարանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Ջրվեժ համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մայիսի 2017 թվականի N 85-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Հովիկ Սամվելի Վարդանյանի դիմումը հողամասից կամովին հրաժարվելու մասին, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Հովիկ Սամվելի Վարդանյանի կողմից կամովին հրաժարված 07-057-0339-0097 կադաստրային համարի 22,6 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբանում՝ իրավունքների պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մայիսի 2017 թվականի N 86-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Միքայել Արտավազդի Քոսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 35-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողակտորում ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մայիսի 2017 թվականի N 87-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Հովիկ Սամվելի Վարդանյանի սեփականությունը հանդիսացող Ջրվեժի 07-057-0339-0095 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,2 քառ.մ մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05052017-07-0048, տրված 2017 թվականի մայիսի 5-ին), փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Հովիկ Սամվելի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0339-0095 կադաստրային համարի 500,2 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 5/18:

3.Առաջարկել Հովիկ Սամվելի Վարդանյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 203 632 (երկու միլիոն երկու հարյուր երեք հազար վեց հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 12
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մայիսի 2017 թվականի N 88-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՈՏՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ջրվեժի համայնքի ավագանու 2005 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 5-Ն որոշումը և հաշվի առնելով Ջրվեժի 1-ին փողոցի թիվ 23 տան բնակիչ Հուսիկ Մամեյի Գալոյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտները՝ 60,5 հեկտար մակերեսով, մեկ տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Ջրվեժի 1-ին փողոցի թիվ 23 տան բնակիչ Հուսիկ Մամեյի Գալոյանին՝ անասնագլխաքանակի արածեցման նպատակով:

2. Վարձակալությամբ տրամադրվող արոտի տարեկան վարձավճարի չափը կազմում է 27 225 (քսանյոթ հազար երկու հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ